«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

ՊՈԱԿ

Մասնագիտությունը

«Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում»

Մոդուլի անվանումը՝

«Կտրվածքների և սանրվածքների մոդելավորում»

Արդյունք1.Դեմքի և գլխի ձևերը

Թեմա1.1 Դեմքի և գլխի ձևերը

Վարսահարդարման այս բաժինը համարվում է կիրառական արվեստ: Այստեղ վարսահարդարը գործի է դնում ոչ միայն իր գիտելիքները, այլև պատկերացումներն ու ճաշակը: Մոդելավորման հիմնական նպատակը՝ տվյալ մարդու անհատականության ընդգծումն է: «Մոդել» բառից է ծնունդ առել «մոդելավորում»-ը, որը նշանակում է մոդելների ստեղծման գործընթաց: Մոդելներ, որոնցից վարսահարդարները ստեղծում են տարբեր նշա- նակության սանրվածքներ:

Վարսավիրական արվեստի զարգացումն ու կատարելագործումը մի կողմից պայմանավորված է դարաշրջանի ընդհանուր ոճով, մյուս կողմից՝ նորաձևությամբ:

Մոդելավորումը լուծում է հետևյալ խնդիրները՝

- բավարարել բնակչության գեղեցիկ սանրվածքներով հանդես գալու պահանջմունքը.
- ստեղծել նորանոր սանրվածքներ՝ պայմանավորված նրանց աշխա- տանքի բնույթով /դասական, սպորտային, հանգստի համար նախա- տեսված և այլն/.
- նպաստել մարդկանց գեղագիտական ճաշակի զարգացմանը՝ ստեղ- ծելով ժողովրդավարական նորաձևություն.
- զարգացնել նորաձևության ողողությունները:

Վարսահարդար-մոդելավորողը պետք է քաջատեղյակ լինի նորաձևու- թյան մեջ հագուստի, կահույքի, ոսկերչական իրերի և ընդհանրապես բոլոր այն ոլորտների նորարարություններին, որոնք անմիջականորեն արտա- ցոլում են հասարակության զարգացումը: Յուրաքանչյուր նորաձևություն իր հետ կարող է բերել նորույթներ, որոնք հնարավոր է լինեն նախորդի հակապատկերը: Այդ հակասություններն էլ նպաստում են նորաձևության զարգացմանը:

Դեմքի կառուցվածքները 5–ն են՝

1. ձվաձև (օվալ)
2. կլոր
3. քառակուսաձև
4. ուղղանկյունաձև
5. եռանկյունաձև

Ձվաձև դեմքը համարվում է կատարյալ: Սովորաբար դեմքը բաժանվում է 3 մասի: Ձվաձև դեմքի դեպքում այն բաժանվում է 3 համաչափ մասերի՝ մազերի աճի եզրագծից մինչև հոնքերը, հոնքերից քթի ծայրը, քթի ծայ- րից մինչև կզակ: Ձվաձև դեմք ունեցողներին սազում է ցանկացած տե- սակի սանրվածք: Ճակատային մեծ մազափնջով կարճ կտրվածքն ավելի երիտասարդ, երկար գանգուր մազերն ավելի կանացի, իսկ ճակատը բաց, ծավալով և կարճ կտրվածքն ավելի էլեգանտ տեսք են հաղորդում հաճա- խորդին:

Կլոր դեմքը բնորոշվում է նեղ ճակատով և արտահայտված այտերով, այն տափակ է և խոշոր: Խորհուրդ է տրվում բարձր սանրվածքներ՝ դեմքը երկարացնելու համար: Թեք ճակատային մազափունջը ճակատն ավելի լայն է ցույց տալիս և կիրառությունը տվյալ դեմքի դեպքում ցանկալի է:

Քառակուսաձև դեմքը տարբերվում է լայն ստորին ծնոտով: Այս դեմքը բավական կոպիտ է և կարծես անկյուններ ունենա: Հարկավոր է մազերը հարդարել գանգուր կամ ալիքներով: Քառակուսի դեմքը կգեղեցկացնի կողքի մազաբաժանը և ձևավոր ճակատային մազափունջը:

Երկար ծնոտը և լայն բարձր ճակատը հատուկ են ուղղանկյուն դեմքին: Դեմքի այսպիսի համամասնությունները այն դարձնում են շատ երկար: Ցանկալի է մազերի երկարության միջին չափը՝ մինչև կզակ: Մազերի եզրերը հարկավոր է հարդարել դեպի ներս, որպեսզի դեմքն արհեստականորեն լայնանա: Կողքային հատվածներում ծավալն ավելորդ չի լինի:

Եռանկյունաձև դեմքն աչքի է ընկնում բարձր, արտահայտված այտոսկրերով և դեպի կզակը նեղացող դեմքի եզրագծով: Եռանկյունաձև դեմքը կարող ենք գեղեցկացնել երկար և խիտ ճակատային մազափնջով՝ նեղացնելով այտոսկրերի հատվածը: Ականջները պետք է թողնել կիսաբաց:

Հարցեր

Ինչպիսի՞ դեմքի ձևեր կան:

_____

_____

Թվարկել սանրվածքների տեսակները՝ հաշվի առնելով դեմքի և գլխի ձևերը:

_____

_____

_____

_____

Թեմա1.2Գլխի և դեմքի առանձնահատկությունները

Ընդհանուր առմամբ, եթե դեմքի վրա հորիզոնական գծերը արտահայտված են, ապա սանրվածքում պետք է շեշտադրել ուղղահայաց գծերը և հակառակը: Սանրվածքն ընտրելիս՝ բացի դեմքի ձևից, հարկավոր է ուշադրություն դարձնել նաև գլխի կառուցվածքին, դիմագծերին, հասակին և կազմվածքին: Մարդիկ ունենալով նույն դեմքի ձևը՝ տարբերվում են աչքերի, մաշկի և մազերի գույնով, ինչպես նաև վզի կառուցվածքով: Գլխի կառուցվածքը կարող է լինել իդեալական կամ թերի, որոշակի հատվածներում արտահայտված տափակությամբ կամ ծավալով: Թե' կտրվածքը , թե' մոդելավորումը կատարվում է գլխի կառուցվածքին հակառակ՝ տափակ հատվածներում ծավալով, իսկ ծավալով հատվածներում՝ տափակ:



1.Եռանկյունաձև դեմքի համար սանրվածքի ընտրում:

2.Չվաձև դեմքի համար սանրվածքի ընտրում:

3.Սեղանանման դեմքի համար սանրվածքի ընտրում:

4.Քառակուսի դեմքի համար սանրվածքի ընտրում՝

5.Երկարավուն դեմքի համար սանրվածքներ



6.Կլորավուն դեմքի համար սանրվածքներ

Հարցեր

Որո՞նք են գլխի և դեմքի առանձնահատկությունները

_____

_____

Թեմա1.3 Մարդաչափական տվյալները

Շատ բարձր հասակ ունեցողներին խորհուրդ չի տրվում շատ երկար և ծավալով մազեր պահել: Գերերին անհամապատասխան է հարթ և առանց ծավալի սանրվածքները: Խոշոր կազմվածք ունեցողներին խորհուրդ չի տրվում երկար մազեր ունենալ, ցանկալի է մազերի երկարությունը լինի մինչև ուսերը: Կարճ վզի դեպքում չի կարելի ունենալ ոչ՝ շատ կարճ, ոչ՝ էլ շատ երկար մազեր: Այս դեպքում գեղեցիկ է շատ շերտերի առկայությունը: Կտրվածքների մոդելավորման հարցում չի կարելի անտեսել նաև մազի տեսակը: Հարկավոր է համոզված լինել, որ ընտրված ձևը գեղեցիկ կլինի հենց այդ տեսակի մազերի վրա:

Երկար քիթ ունեցող դեմքի համար նախատեսված սանրվածքի տարբերակներ



Երկար պարանոց ունեցող մարդկանց համար սանրվածքի նախատեսված տարբերակներ

Հարցեր

Ո՞րն է մարդաչափական տվյալների և սանրվածքի տեսակի միջև կապը:

_____

_____

_____

Արդյունք2. Կտրվածքների և սանրվածքների տեսակներն ու տիպերը

Թեմա2.1 Կտրվածքների և սանրվածքների տեսակներն ու տիպերը

Սանրվածքները մազերի ձևավոր հարդարումն ու գանգրացումն է կամ էլ մազերի կտրվածքը ոսկերչական զարդերի, ժապավենների, ժանյակների ծաղիկների կամ փետուրների համակցմամբ: Մազերի արհեստական հեռացումը, եթե այն միտված է արտահայտելու որոշակի գաղափար, նույնպես ընդունված է համարել սանրվածք: Օրինակ՝ մուսուլմանական հոգևոր ծառայողները սափրում էին գլուխները, կաթոլիկ եկեղեցականները սափրում են միայն գլխի գագաթային հատվածը, ինչն էլ նշանակում էր աշխարհիկ կյանքից հրաժարում: Սանրվածքները ստեղծվում են բնական և արհեստական մազերից /հյուսեր, շինյոններ, պարիկներ և այլն/: Այն անքակտելի կապի մեջ է ոչ միայն զգեստի, այլ նաև շպարի հետ, իսկ տղամարդկանց պարագայում դրանց ավելացում է նաև բեղերի և մորուքի համապատասխանությունը:

Սանրվածքներն ըստ նշանակության բաժանվում են երկու խմբի՝ կեն- ցաղային և դիմակահանդեսային: Կախված սեռից և տարիքից՝ սանր- վածքները լինում են տղամարդկանց, կանանց և երեխաների: Տարիքային բաժանումը պայմանավորված է մարմնի կառուցվածքի տարբերություններով, դրանց համաչափությամբ, տարբեր տարիքի մարդկանց հոգեբանությամբ պայմանավորված:

Ըստ սանրվածքների ստեղծման՝ դրանք լինում են.

- ջերմային գանգրացում՝ էլեկտրափաթաթուկով.
- սառը հարդարում՝ մատներով, փաթաթուկներով.
- օդային՝ հարդարիչով,
- համակցված՝ տարբեր միջոցների կիրառմամբ,
- պերմանենտային գանգրացում,
- ձևաստեղծվող մազերի կտրվածքներ՝ մկրատով:

Հարցեր

Ինչպիսի՞ կտրվածքներ և սանրվածքներ կան կախված սեռից և տարիքից:

_____

_____

Սանրվածքի ստեղծման ի՞նչ տեսակներ կան:

Թեմա2.2Կտրվածքների և սանրվածքների առանձնահատկությունները




Այս կամ այն սանրվածքներ ստեղծելու համար մեծ նշանակություն ունի մազերի երկարությունը: Այդ պատճառով սանրվածքները տարբերվում են ըստ երկարության՝

- կարճ՝ մինչև 10 սմ երկարություն ունեցող,
- միջին՝ 10-25 սմ,
- երկար՝ 25 և ավելի:

Գոյություն ունեցող բոլոր սանրվածքները, ըստ մազերի աճման ուղղու- թյան, բաժանվում են հետևայլ խմբերի՝

1. հակառակ /обратные/.

2. կոնցենտրացված/концентрированные/.

3. դիմային /передние/.

4. կենտրոնից ներքև թափվող /ацентральные/:

Հակառակ ուղղությամբ սանրվածքը բնորոշվում է հետ սանրած մա- զերով: Այն կիրառվում է և՛ տղամարդկանց, և՛ կանանց համար: Մազերի երկարությունը կարող է լինել տարբեր: Այս սանրվածքը ամենատարած- վածներից է:

Հակադիր սանրվածքի դեպքում բոլոր մազերը սանրվում են դեպի գլխի գագաթը: Այս սանրվածքի համար ներքևի հատվածի մազերը պետք է լինեն

Հակառակ ուղղությամբ սանրվածք:

Հակադիր սանրվածք:

Դիմային:

Գագաթի կենտրոնից ներքև թափվող:

բավականին երկար: Այս տեսակի սանրվածքները հատուկ են միայն կանանց:

Դիմային սանրվածքը ևս նախատեսված է միայն կանանց համար: Բոլոր մազերը սանրվում են դեպի դեմքը: Ծոծրակային հատվածի երկար մազերն աստիճանաբար կարճանալով՝ ձևավորում են ճակատային մազափունջ:

Կենտրոնից ներքև թափվող սանրվածքի դեպքում բոլոր մազերը սանրվում են մազերի աճման ուղղությամբ: Մազերը կարող են լինել տարբեր երկարության՝ բացառությամբ ճակատային մազափնջի, որը պետք է լինի կարճ: Այս սանրվածքի տեսակը բավականին մեծ տարածում ունի և կիրառվում է ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար:

Հարցեր

Որո՞ք են սանրվածքների առանձնահատկությունները:

_____

_____

Արդյունք3. Սանրվածքների ուրվագծերը և ուրվագծերի երկրաչափական ձևերը

Թեմա3.1 Սանրվածքների ուրվագծեր

Սանրվածքների ուրվագծումը պետք է սկսել առանցքային բաղադրամասերից - ուրվագծից, որը կարող է լինել ուղիղ կամ կոր:

Սանրվածքները կարող են լինել ուղիղ ուրվագծով կամ կոր:Եթե սանրվածքը կատարվում է ուղիղ մազերով՝ ապա այն ուղիղ ուրվագիծ կունենա:Եթե սանրվածքը կատարվում է կոր, ալիքաձև մազերով՝այն ունի կոր ուրվագիծ: Յուրաքանչյուր սանրվածք ունի ուղղահայաց, հորիզոնական, ձախ և աջ գծեր,

որոնց ամբողջական գծապատկերը կտա հետագա :
սանրվածքը: Գծերի ուղղությունը օգնում է ընկալել սանրվածքը, որպես ամբողջություն:Ուղիղ կամ կոր գծերը ,որանք համարվում են սանրվածքի հիմնական տեսքը բնորոշող գծեր՝ կարող է լինել բարակ կամ հաստ, աննկատ կամ սուր: Կախված այն

բանից,թե սանրվածքը ինչ առիթի համար է, այն կարող է արտահայտել թուլություն կամ ուժ, հզորություն և խիզախություն, կանացիություն կամ առնականություն

Կախված մազերի տեսակից՝ հաստությունից, խտությունից, երկարությունից, սանրվածքը կկատարվի համապատասխան տվյալ առիթի համար:Եթե մազերի որակը թույլ չի տալիս կատարել տվյալ սանրվածքը վարսահարդարը պետք է օգտագործի լրացուցիչ միջոցներ/շինյոններ,կեղծամներ/:

Հարցեր

Սանրվածքի ուրվագծերը ի՞նչ նշանակություն ունեն:

_____

_____

Ի՞նչ տեսակի ուրվագծեր կան:

_____

_____

Թեմա 3.2 Սանրվածքների ուրվագծերի երկրաչափական ձևերը Ըստ ուվագծի և ծավալի սանրվածքները կարելի է բաժանել երեք խմբի.գլխի ձևը ուրվագծող, գլխի ձևը կիսաուրվագծող, դեկորատիվ:Այն սանրվածքները, որոնք **ամբողջությամբ ուրվագծում են գլխի ձևը**, շատ գեղեցիկ են, ռճային և էլեգանտ տեսք են ունեն,սակայն ոչ բոլորին են այս սանրվածքները հարմար,քանի որ հստակ ուրվագծում են գլխի ձևը չթաքցնելով թերությունները:

Գլխի ձևը կիսաուրվագծող սանրվածքները կարելի է համարել անցումային սանրվածք դեպի դեկորատիվը:Այս ձևը ամենատարածված և հարմարն է:



գլխի ձևը ամբողջությամբ ուրվագծող սանրվածք

գլխի ձևը կիսաուրվագծող սանրվածք



Դեկորատիվ սանրվածք

Դեկորատիվ ուվագծով սանրվածքները ունեն շատ փարթամ տեսք, գլխի ուրվագիծը չի երևում, որը և հնարավորություն է տալիս թաքցնելու բոլոր թերությունները և ընդգծելու առավելությունները: Ինչպես դեմքի ձևերը, այնպես էլ սանրվածքի ձևերը, ընդունված է ներկայացնել երկրաչափական ուրվագծերով և բաժանվում են 6 հիմնական խմբերի:Յուրաքանչյուր խումբ ունի մի քանի տարբեր սանրվածքների և հարդարանքների տեսակներ: Այս տարբերակները կոչվում են ոճեր:Դրանք կարելի է կատարել տարբեր դեկորատիվ մասնիկների և հարդարման հնարքների օգտագործման միջոցով՝ալիքներ,խոփոփներ անելով:Սակայն յուրաքանչյուր ընտրված լրացուցիչ միջոցը պետք է համապատասխանի տվյալ ոճին, համահունչ և ամբողջական դարձնի սանրվածքը:

1

2



3

1.Ուղղանկյուն, կողմնային կողմերը ուղիղ են

2.Ուղիղ սեղան/կողմերը բացված են ներքևի մասում/

3.Ուղիղ սեղան/կողմերը բացված են վերևի մասում/

4.Եռանկյունանման/կոկակման ուրվագիծ/

5.Կլոր /գնդանման ուրվագիծ/

6.Ձվաձև /կլոր մասը ձգված է երկարությամբ/

5

6

Հարցեր

Ի՞նչ նշանակություն ունի երկրաչափական ուրվագիծը ապագահ սանրվածքի որոշման համար:

_____

_____

Ինչպիսի՞ ոճերի են բաժանվում սանրվածքները՝ ըստ երկրաչափական ուրվագծերի:

_____

_____

_____

Թեմա 3.3 Սանրվածքների ուրվագծերը տարբեր դիրքերից

Սանրվածքները մոդելավորելու աշխատանքների ընթացքում հաշվի է առնվում դրա ընդհանուր ուվագիծը:Կախված կտրվածքի տեսակից և մոդելավորումից սանրվածքի ուրվագիծը տարբեր դիրքերից ընդգծում է տվյալ տարածքի ձևը, և լրացնում է ամբողջական մասի մի տարրը:


а
б
в
г


а
б
в
г

Հարցեր

Ինչպիսի՞ նշանակություն ունի սանրվածքի ուվագծերի տեսքը տարբեր դիրքերից:

_____
_____
_____
_____

Արդյունք 4 Կտրվածքների և սանրվածքների ընտրություն և մոդելավորում

Թեմա 4.1 Կտրվածքի ճիշտ ընտրություն՝ հաշվի առնելով դեմքի և գլխի ձևերը,մարդաչափական առանձնահատկությունները

Կտրվածքի ընտրության ժամանակ հարկավոր է հաշվի առնել դեմքի և գլխի ձևերը,մարդաչափական առանձնահատկությունները:

Ասիմետրիկ կառե-կատարյալ տարբերակ է փոփոխելու սանրվածքը և նորից վերականգնել նախկին տեսքը:Կարճ ուղիղ կառե,ծավալով կառե փոքրիկ պոչով, համահունչ երկարացված կառե ճակատային մազափունջով կամ առանց մազափունջի-բոլոր այս տարբերակները թույլ են տալիս թաքցնել դեմքի և գլխի ձևերի թերությունները և ընդգծել գեղեցիկ ուվագծերը:

Ասիմետրիկ կառեն այլ տեսք ունի ուղիղ կամ թեք ճակատային մազափնջով

Երկարացված ասիմետրիկ կառեն ճակատային մազափնջով տեսականորեն երկարացնում է դեմքը

1  1Ասիմետրիկ կառեն առանց ճակատային մազափնջի և ծոծրակային կարճ կտրվածքով

2

2Երկարացված բոբ-կառեն հակառակ շերտաներկմամբ ըդգծում է մազերի բնական խտությունը

Ասիմետրիկ մազափնուջը և տարբեր ձևերով մոդելավորելով հեշտությամբ թարմացվում է ամբողջական կտրվածքի տեսքը:

Այս տեսակի սանրվածքները կարելի է օգտագործել բոլոր տեսակի դեմքերի ուրվագծեր և գլխի ձևերի դեպքում:

Գիտենալով դեմքի և գլխի ձևերի մասին՝ձվաձև,կլոր,քառակուսի, ուղղան-

կյուն,եռանկյուն, յուրաքանչյուր ձևը պահանջում է որոշակի սանրվածք:

նկ.1

Ձվաձև դեմքը/նկ.1/առանձնանում է անթերի չափսերով և այս ձևի համար սանրվածքի ընտրությունը շատ բազում է ու հեշտ:Մազերի երկարությունը կարող է լինել ցանկացած չափի,մազափունջը՝երկար,կարճ կամ թեք:Մազերի մոդելավորումը հարմար է ինչպես ուղիղ ,այնպես էլ ալիքավոր:

Կլոր դեմքը/նկ.2/ տարբերվում է լայն այտերով,նուրբ դիմագծերով:Այս տեսակի դեմքը հնարավոր է մոտեցնել կատարյալ տեսակի ՝տեսականորեն նեղացնելով սանրվածքի միջոցով:

նկ.2

Դրան հասնելու համար, հարմար օգտագործել ուղղահայաց գծերով սանրվածքներ: Ամենահարմար մազերի երկարությունը՝ միջին մազերն է (20-25 սմ): Այն խորհուրդ է տրվում կրել գագաթային մասում բարձր և ուղիղ կամ ասիմետրիկ ճակատային մազափնջով: Ականջներ խորհուրդ է տրվում բաց թողել կամ թույլ ծածկել մազերով: Պետք է բացառել սանրվածքներ, որոնք հետ են սանրված, կլոր ձև ունեցող սանրվածքները, սանրվածքներ բաց ճակատով, քանի որ դրանք տեսականորեն կլորացնում են դեմքը եւ ընդգծում դեմքի թերությունները:

Քառակուսի դեմքը (նկ. 3) աչքի է ընկնում լայն ծնոտով ու լայն բարձր ճակա-տով: Որպեսզի մեղմել անկյունային, կոպիտ դիմագծերը,հարկավոր է ընտրել ալիքավոր մազերը սանրվածքներ ասիմետրիկ տարրերով/թեք բաժուկով և ճակատային մազափնջով/: Կարելի է թողնել ականջները կիսաբաց: Չի կարելի կրել երկար հաստ ճակատային մազափնջ՝ հետ սանրած մազերով:





Նկ.3 Նկ.4 նկ5

Ուղղանկյուն դեմքը (նկ. 4), որը բնութագրվում է մոտավորապես նույն լայնությամբ ճակատով և կզակով: Ճակատը բարձր է, կզակը թեթեւակի ձգված: Այս տեսակի դեմք ունեցող մարդիկ պետք է խուսափեն տեսականորեն երկարացնող դեմքը սանրվածքներից:

Խորհուրդ չի տրվում երկար հարթ մազերով կամ, ընդհակառակը, շատ կարճ մազերով ճակատային մազափնջով սանրվածքներ : Այս դեմքի տեսակի դեպքում կարելի է փարթամ, ծավալուն սանրվածք կրել՝

երկար ուղիղ կամ, կիսաուղիղ ճակատային մազափնջով մինչև հոնքերը/քանի որ բաց չակատը ընդգծում է դեմքի ուվագիծը և տեսականորեն երկարացնում է այն: Եթե դեմքը շատ նեղ է անում են ալիքավոր մազերով սանրվածք, քանի որ գանգուրներ մազերը կլորացվում դեմքը: Նաև, հարմար է և կարճ սանվածքը՝ քունքային մասերում ծավալով և կիսափակ ականջներով:

Եռանկյուն դեմքը (Նկար 5) որը բնութագրվում է լայն բարձր ճակատով, լայն և բարձր այտերով, փոքր կզակով: Մարդիկ այս տեսակի դիմագծերով չպետք է կրեն կողմնային հարթ մազերով սանրվածքներ:Ընտրությունը կայանում է կարճ կամ կիսաերկար մազերի միջև:

Հարցեր

Ի՞նչ առանձնահատկու--

թյուններ է հարկավոր

հաշվի առնել սանրվածքի

մոդելավորման ժամա-

նակ: